




ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՇԱՐԱՐ, 21-ՅՈՒՆԻՍ 1906, ԱՆԵՔՍԱՆԴՐԻԱ



ՏԻԿԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ.- Խեղճ ճրեսպիտա-
նական ժողով, կիրակի օրուան խուրմայի ծառին բա-
ցօղեայ նիստէն արեւազարկ եղեր է...

ՊՈՂՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

(Հեռուեալ դրութիւնը զոր գոհութեամբ կը հրատարակենք, անկեղծ և անկողմնակալ աղբիւրէ մը կը բղխի և ասոր համար անշուշտ շատ աւելի արժէք ունին իր անկախ քննադատութիւնները և իրաւացի դիտողութիւնները: Բայ աստի, Տ. Ա. Բապուճեան մին էր այն վեց-եօթը քննիչներէն զորս Տ. Սմբատ Բիւրատ յատկապէս հրաւիրած էր քննութեանց ներկայ գտնուելու համար, որպէսզի մօտէն տեսնեն դպրոցին վիճակը և ըստ այնմ իրենց կարծիքը յայտնեն:

Անցած շաբթու Պօղոսեան վարժարանի տնօրէնը վարժապետական մարմնոյն պաշտօնական հրաւէր կը զրկէ որպէսզի վարժարանի վերաբացման իրենց պաշտօնը վերսկսին. տնօրէնին այս բժոշոտ ընթացքը ինձ մեծ դարմանք պատճառեց. վարժարանին հոգաբարձութիւնը միայն իրաւունք ունի դասատուաց մարմինը նոր պաշտօնի հրաւիրելու եւ կամ զանոնք հրաժարեցնելու: Բայց քանի որ Աստուր պէյի տիրահռչակ հոգաբարձութենէ վերջնականապէս ազատելու բաղձին արժանացանք եւ նկատելով որ ճիշտ հիմա ազգային ո եւ է պատասխանապատու մարմին մը գոյութիւն չունի՝ ազգին ո եւ է անսահմաւոր պաշտօնեան հրաժարեցնելու կամ պաշտօնի հրաւիրելու իրաւասութիւնը Առաջնորդ հայր սուրբին կը պատկանի: Եւ մեր տնօրէնը կօշիկէն շատ, խիստ շատ վեր կելլէ երբ ամօթալի քննութենէ մը վերջ, դեռ չը համար-

ձակի ազգին օրէնքնեցը ոտնակոխ ընել և ինքզինքը վարժարանին բացարձակ տէրը հռչակել:

Աւանդական կեանքիս մէջ հարիւրէն աւելի քննութիւններ անցուցած եմ և շատ մը բերանացի քննութեանց ալ ակնատես եղած եմ թէ՛ Եւրոպա, թէ՛ Պօլիս և թէ՛ գաւառները, սակայն ինչ որ տեսայ և ինչ որ ստուգեցի Պօղոսեան վարժարանի տարեկան քննութեանց առթիւ սիրտս առականով լեցուցին: Բերանացի քննութեանց առթիւ ընչունուած օրէնքը այն է որ դասատուն աշակերտներուն թւոյն հաւասար հարցումները կանխաւ թուղթի վրայ պատրաստէ և աշակերտները վիճակ քաշելով իրենց ելած հարցումներուն պատասխաններ նաեւ քննիչ մարմին մը կ'ըլլայ որուն անդամները անկախաբար աշակերտին տրւած պատասխանին համեմատ թիւեր կուտան որոյ միջինը աշակերտին այդ նիւթին մէջ ունեցած կտրուցութեան աստիճանը կը ներկայանէ: Բոլոր քննութեանց մէջ այս օրինակոր և խիստ պարզ մեթոտը զանց առնուած էր ու դատատուն իրեն ներկայացած աշակերտին ըստ կամս ուզած տեղէն հարցում կ'ուղղէր: Եւ դասատու մը այն աստիճանի անամօթխած և լիբը գտնուեցաւ որ նախ իր հարցումը բրաւ ու ետքը հարցուց թէ ով կրնար այդ հարցումին պատասխանել: Արդիւնքը այն եղաւ որ այդ պարագային իսկ աշակերտը չկրպաւ գոհացուիչ պատասխան տալ: Եւ մարդ մանկավարժ կամ փիլիսոփայ ըլլալու պէտք չունի հասկնալու համար թէ մեր տնօրէնին հարցաքննութեան այս տարօրինակ կերպը ինչ կը նըշանակէ: Բացորոշապէս յայտնի էր որ աշակերտները տարուան ընթացքին մէջ բան մը չէին սովորած և դասատուն կամ այն է որ ամէն աշակերտի կանխաւ

հարցումներ տուած եւ պատուիրած էր որ ատոնք սովորի եւ կամ քննութեան միջոցին քննուելիք աշակերտին կարողութեան համեմատ ղիւրին կամ դժուար հարցում կ'ուղղէր, այսինքն բժիշկ մը որ հիւանդին բազկերակին համաձայն դեղագիր կուտայ, երկու պարագան ալ խիստ դատապարտելի է որովհետեւ այդ օրիորդները եւ պատանիները իրենց մատղաջ հասակին մէջ խաբերայութեան եւ կեղծաւորութեան միայն կը վարժուին:

Այս քննութեանց առթիւ Պօղոսեան վարժարանի ուսուցչական մարմինը, տնօրէնն ալ միասին առնելով իր բացարձակ տգիտութիւնը եւ անկարողութիւնը երեւան հանեց: Դիտեցի որ դասատուն անգամ մը չասագրքին սկիզբէն կը հարցնէ, ետքը վերջաւորութենէն, ապա մէջտեղէն ու կրկին սկիզբէն կը սկսի եւ այսպէս բաբելոնական խառնակութիւն մը կ'ըլլայ որուն մէջէն ուսուցչապետն անգամ չկրնար ելլել: Քննութեան ատեն դասատու մը իր նիւթին սկիզբէն հարցնելու է և քայլ առ քայլ յառաջանալու է. իր հարցումները աստիճանաբար իրարու հետ շղթայուելու են որպէսզի էն տգէտ ունկընդիրն անգամ կարող ըլլայ բան մը սովորիչ, բան մը հասկնալ:

Ուրիշ տխուր երեւոյթ մը որ ուշադրութիւնս գրաւեց սա էր թէ աշակերտներուն խորհելու և դատելու կարողութիւնը բոլորովին կաշկանդուած էր: Մէկ երկու պարզ հարցումներ ուղղեցի տեսնելու համար թէ աշակերտը պիտի կրնայ անկախաբար խորհելու գոհացուցիչ պատասխան մը տալ. առանց սպասելու որ աշակերտը քիչ մը ուղղած հարցումիս վրայ խորհի եւ աղէկ կամ գէշ պատասխան մը տայ, մեր տնօրէնը իսկոյն կը միջամտէր եւ իմ հարցումիս այն-

պիսի ձեւ իր կուտար որ պատասխանը իր մէջը կը պարունակէ: Աշակերտները պարզապէս թուժակներ եղած են որոնց զասատուն միայն իր ուզածը կամ գիտցածը շարունակ կրկնել տուած է, առանց նկատողութեան առնելու թէ անոնք միտք ունին, խորհելու կարողութիւն ունին եւ պէտք է այդ կարողութիւնները մշակել:

Վերջերս «Ազատ Խօսք» թուարանական պարզ հաշիւով մը կը ցույնէր թէ ամբողջ տարուան ընթացքին մէջ 150 օր միայն դպրոցը բաց մնացած էր: Բայց վերահասու աղբիւրէ մը քաղած տնօրէնութեանս համեմատ այդ շատ հեռու է իրականութենէն: Հոկտեմբերին վարժարանը կը վերսկսի առանց որոշ ծրրագրի եւ աշակերտները «սերտողութիւն»ով ժամանակ կ'անցնեն ամբողջ երեք ամիս: Նոյեմբերին ծրագիրներ կը պատրաստեն, դեկտեմբերին կը սրբաբերեն եւ ծնունդի պարագուրէն վերջ միայն «գոլէժական» ծրագրով մը շատաւաճիւթեանց կը սկսին:

Ո՛ր տեսնուած է այս տեսակ խղճահար, պարտաճանաչ եւ եռանդուն տնօրէն մը եւ ուսուցչական մարմին մը: Վարժարանը պարզապէս ծոյլերու, թուլամորթներու եւ խաբերաներու ժամադրավայր մը եղած է. եւ երանի այն ծնողքներուն որ իրենց զաւակները Պօղոսեան վարժարանին մէջ դաստիարակել տալու դժբաղբութեանը չեն մատնուած:

Ա. Յ. ԲԱՊՈՒՃԵԱՆ



Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ
ՎՈՆՄ. ԲԱՐԹՈՂ ՓԱՇԱՅԻՆ

Տէօլէթլու - Էֆէնտիմ Հապէթլէրի

Իշիթտիկիմիդէ նէզարէն եհնիտէն Բաթրիք-
խանէ մարիֆէթիլիլէ էսկի մէմուրիլէթիւնիդ թա-
ղէլէնմիշ վէ զաթը ալիւնիդ տախի ատէթը գա-
տիմէնիդ իւզրէ էսկի մինվալ միւճիպիւնճէ թալի-
մաթլարընըզը գույրուգլու վէ գույրուքսուզ գուլ-
լարընըզա թէվղիլէ միւպաշիրէթ իթմէքտէսիւնիգ՝

Փաշամ տողրուտունու սէօյլէմէք իքթիզա ը-
սա, պէնճէ, ումուրումոան խափճ, իսթէր սա-
նամար տուտունուն մարիֆէթիլիլէ էֆքեարընը
եիւրիւտ, իսթէր կնքամար հանըմըն իսթէտիկի
իլէ, իսթէր՝ Օրման միւֆէթթիլիւնին պալթասը
սայէսինտէ մայմունլարը գօրգուտ, իսթէր կիւ-
տէմէտիլիւն սիւրիւնիւն մէլէմէսինէ նիսպէթէն
սօփանը սաղա սօլա սավուր, պունլարըն հիշ
պիր էհէմմիլէթի եօք պէնիմ իշին. քէյֆ սիզին,
քէօյ Մէհմէտ աղանըն:

Անճա՛ր էճա ու նիյազ իտէրիմ փաշամ շու
մէսէլէյէ օ պիր շէյլէրէ պագտըղընըզ նազար-
լա պագմայասընըզ, չիւնքի պէնիմ Ալլահըմ տա
մէքթէպ տիր, տինիմ իմանըմ տա մէքթէպ տիր,

նամուսում տա մեքթէպ տիր, ճանրմ տա մեքթէպ տիր, հայեաթըմ վէ միւսթագպէլիմ տա մեքթէպ տիր: Օրասը թիմարհանէ տէյիլ քի լասթ կէլէն սօփօլօղուն նէզարէթինէ պրագպսընըզ խայըրխանէ տէյիլ քի, պիր թագըմ թիւպիւ պէ թիւլիւ միսկինլէրին գայրըմասը պապընտա ֆէրման պուլուրասընըզ:

Պունլարը սէօյլէմէմտէն սէպէպ, չիւնքի տույտում քի պու սէնէ տախի մեքթէպին քեաֆֆէյի մէհմուրունա ատէթ օլան «տուրսուն», վարագալարընը կէօնտէրտիյինեղտէ Սմբատ Բոյրոտ օլաճագ անօրէնէ պու վարագալտան կէօնտէմէտիքտէն գաթի նազար, կէլէչէք սէնէլէր իչիւն ցաախի էսկի մէմուրիյէթինէ տէվամ իթմէսինէ արզուքէչ իմիչիմինիպ:

Փաշամ, սահիհ տիր քի պաշքա մէսէլէլէրտէ քէյֆ սիզին, քէօյ Մէհմէտ աղանըն, լաքին պու մէսէլէլէտէ քէյֆ սիզին օլումազ, չիւնքի քէօյ ումում էրմէնի միլլէթին իւ տէյիլ Մէհմէտ աղանըն:

Սահիհ տիր պաշգա մէսէլէլէրտէ պաղ պաղճէպանըն, ազչէ սարաֆըն, լաքին պու մէսէլէտէ պաղտա միլլէթին, ազչէտէ միլլէթին, աննատընը՞զ մը փաշամ եօգ էկէր սիզին տէ պաղըլարը կիպի նազիք տույղուլարընըզ գապարըպ թուղեան իտէյօր վէ պիր պիչարէ միսկինին տըչարաա հիչ պիր շէյէ եմրամատըղընտան նաչի,

հէր հալոտէ գայրըլմասընը արգու իտիյօրսանըզ չօք շիւքիւր, սայէի շահանէտէ սէրվէթինիզ վար, չիֆթիլքէրինիզ վար, աթլարընըզ արապալարընըզ վար, չիֆթինիզ չուպուզունուզ վար, գաթըլարընըզ մէրքէպլէրինիզ վէ էօքիւզլէրինիզ վար, ապատիյէնիզէ էօքիւզճի տէյի կէօնտէրին, լաքին շիմտիտէն միւսթերիհ օլապիլիբրսինիզ քի. օ սէֆիլ վէ պիշարէ միլլէթին իւզլէրճէ էվլատուարընը իտարէսինէ թէսլիմ պույուրտուզունուզ հէրիֆ, սիզին էշէքլէրի վէ էօքիւզլէրի կիւտմէյէ տէ միւքթէտիր տէյիլ. լաքին սաթըպ սավըպ էուտմանըն պիրինճի ուսթասը տըր. սօյրուսու օ պապտէ պէն քէֆիլիմ:

Իշթէ պէօյլէ փաշա հազրէթլէրի, ումարըմ քի քէնտէնիզէ պիր քաշ սաթըր խալիսանէ սէօզլէրիմտէն կիւճէնմէյիւպ, իլլ վիճտանընըզ պանա հազ վէրմէնիզի զաթը ալինիզէ իճպար իտէճէք վէ պունտան պէօյլէ օ եօլտա հարաքէթ էթմէյէ թէնէզզիւ պույուրաճագսընըզ.

Իքինճի պիր բէճամ տահա վար:

Պու կիւնլէրտէ պազը՝ Պազտատտան վէ Պատրաստան կէլէն հէրիֆլէր, կիւյա զաթը ալինիզի իլթիմաս էթմէք վէ օ սայէտէ նազարը տըզգաթընըզը ճէլպ իտէրէք պիր շէյ շարփմագ արգուսույլա զազէթալարտա պէնտլէր նէշը իտէրէք գուրա մէսէլէսինի թէքլիպ և քէնտիսինտէ պի-

րինճի վէ խաս պէլէտի օլմասընը իտտա իտիյօր:
Փաշամ խալիսանէ սէօյլէրիմ քի, էկէր պու
եօլտա ատամլարըն միւտաֆասաւընա միւհթած
դարմըլասնըզ սահիհէն փէք էսէֆ օլունաճագ հար
Պունտան գաթի նազար զաթը ավինիզ պու ա-
տամլարա աննաթմալըսընըզ քի, սահիհէն եէրլի վէ
եախօտ պէլէտի ֆարզլարը արանըլըր, լաքին
Ըստամպօլտա էնկինարըն ֆարզը վար պէլէտի
օլուրսա, օ տա՛ էկէր աշլամա վէ դարըլըզ օլ-
մագսա:

Փաշա հազրէթլերի ավֆ պույուրուրսունուզ
վարագամըն պէլքի էլֆագը նազիքեանէ խի-
լաֆընտա օլմասընա, չիւնքիւ պազըլարը կիպի
տարիւլֆինուն սօգազլարընտա կէզինմէմիշիմ վէ
էկէր աշղուհալըմ պիրագ ուզունճա օլտու իսէ,
չօք սըզըլմալըն զիրա պէն խուսուսի չանչանլարա
պէնզէմէյիպ պիւ քաչ սէնէտէ պիւ կէլիրիմ, օլ
պապտէ վէ հէր հալտէ:

ԺՈՂՈՎՈՒՐԴ ՕՂԼՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԽՕՍՔԻ ՇԱՐՈՑ

Մէկը կայ մէկը չկայ.

Սեր աշխարհի կազմակերպութենէն չգիտեմ քա-
նի տարի առաջ, երկու վանական արեղաներ կան ե-
զեր, մէկ օր ասոնք՝ ըստ սովորութեան կալաճած պա-
հուն, մեծը պզտկին կը պարծենար թէ ինք այնքան
գիտուն ու խելացի էր որ ուզած ատեն իր քարո-

զովը ժողովուրդը կրնար ինչպիսի կամ լաղնել եւ միանգամայն կը սնդէր թէ հակառակ պարագային, պատրաստ էր իրեն հէլվա մը կերպունելու համար զըրաւի մտներ, իսկ պզտիկ արեղան որ աւելի խորամանկ ու վարպետ էր, կըտէր թէ այդ ընելիքը շատ պարզ ու բնական բան էր, եւ թէ ինք կարող էր այնպիսի քարոզ մը խօսիլ որ միեւնոյն վայրկեանին ունկնդիր ժողովուրդին կէտը լար ու կէտն ալ խընդար. եւ թէ ինք պատրաստ էր հակառակ պարագային հէլվացին հետ հարիսա ալ կերցունելու Եւ իրաւ ալ քարոզը տուաւ, քսածը ըրաւ զրուր ստարաւ ու հէլվան հարիսան ալ կերաւ:

Բայց թէ ինչ էր տուած քարոզը՝ որոնք համար ժողովուրդին մէկ մասը լալէն իսկ միւս մասը խընդալէն կը մարէին, այդ կտորը հարցունողներուն գազտուկէն կը պատմուի:

Խնդիրը սա է թէ այս արեղաներուն մասալը ինծի մեծ պրզի՞ն տուաւ եւ լսած օրէս կը հալէի ու կը մաշէի որպէս զի ես աւելի մեծ ու շնորհքով զիւս մը ընեմ որ աւելի մեծ ու տարօրինակ ազդեցութիւն ընէ մտիկ ընողին վրայ. եւ ոչ միայն մէկ մասը լայ, միւս մասը խնդայ, հապա լսողներէն ոմանք լան, ոմանք շնորհակալութեան համար ձեռքս թոթվեն, ոմանք կատղելով զլիտուս փայտ մը իջեցնեն, ոմանք առ սա ժողբիկ նուէրս չոճուխներուն եէմիչ տար ըսեն. ոմանք զիս մեռցունելով ձեռքի պատառս ալ խըլեն վերջապէս ոմանք՝ ինծի համար ըինչ աղէկ մարդ է՞ ըսելով զլիտունուն վրայ բռնեն եւ ոմանք ալ ասկից գէշ մարդ չըլար ըսելով զեանին՝ տակը անցունեն. Այս զիւտս ինծի շատ մեծ հաճոյք պիտի պատճառէր, անոր համար տարիներով մոլորակէ մոլորակ

Թափառեցայ, օրերով շարաթներով անքուն մնացի,
ծովեր ու ովկիանոսներ պատանցի, հալածուեցայ,
չարչարուեցայ, յոգնեցայ ու տքնեցայ բայց վերջա-
պէս գտայ:

Չիմա իմ տեղս եթէ գրագէտ մը ըլլար, այս «գը-
տայ» բառին տեղ «էվրիքա» պիտի ընէր, բայց ի՞նչ
օղուտ որ ես գրասէր եմ եմ եւ ոչ թէ գրագէտ. սա
ալ պէտք է աւելունեմ որ «գրասէր» կըսեմ նէ Ատո-
մը չեմ եւ Ատոմ կըսեմ նէ Ասլան ալ չեմ:

Օրհնեա՛լ ժողովուրդ,

Չէ՛, ներկեք, վարդապետը միաքս ինկաւ:

Արեւի ընթերցող, չըլլայ որ դուք իմ խօսքիս
կապը թող տաք. ես երբեմն կ'ըլլայ որ միջանկեալ
բաներ մը միաքս կը պաշարեն ո՛ր թուամվայի պէս
գիծէն դուրս ինչալով ժամավաճառ կ'ըլլամ բայց նո-
րէն կ'ելլեմ գիծին վրայ եւ խօսքիս թելը բռնելով
կը շարունակեմ ճամբաս:

Օ՛ն, ի՞նչ կ'ըսէի կոր:

Հո՛ւ, երբոր ես իմ օղային կամ մթնոլորդային
ճամբորդութեանս միջոցին Հրատ մոլորակին մնաք
բարովը տուի ու անցայ Մրատ մոլորակին մէջ հաս-
տատուելու, տոաջին հիւրասիրուած տանս մէջ ինծի
տեսակ մը շարոց պտտիւ ըրին, որ մեր աշխարհիզ
արօցներուն պէս մասնաւոր պտուղէ մը շինուած չէր
եւ մասնաւոր համ ալ չունէր, այլ ամէն բան էր եւ
ամէն համ կը պարունակէր իր մէջ. հետեւաբար շատ
հետաքրքիր էի իմանալու թէ արդեօք կերած շարոցս
ի՞նչ տեսակ պտուղէ շինուած էր. ուստի մեր խօսակ-
ցութեան պահուն կերպով մը հարցուցի իմ հիւրըն-
կալ տանտիկնոջս.

-Արդեօք կրնայի՞ք բացատրել սիրելի տիկին թէ

ինչ անտակ պտուղէ կը պատրաստէր այս շարքը՝
- Այո՛, պարոն, պատասխանեց տիկինը ազնու-
թեամբ, մեր ընտներուն վրայ անտակ մը բոյս կայ ո-
ր են համայնիկ անունը կուտանք եւ որ որոշ հոտ մը
կամ որոշ համ մը չունի, այլ ամէն համի հոտի կը
յարմարի, ահա այս համայնիկէն կը պատրաս-
տենք շարոցը որ առանց փտեցու շատ ալ կը դիմանայ՝

Ահա ասկէ ետքն էր որ համայնիկին ինդիրը ա-
ւելի իմ մտածողութեանս առարկան դարձաւ գիշեր
ու յերեկ, արդեօք կարելի՞ է... Ես մեր երկրագուն-
դին մէջ ապրած ատենս գիտէի որ ընկուզէ շարօջ
կը պատրաստեն, նուչէ շարօջ կը պատրաստեն ա-
ռանց պտուղի ալ շարօջ կը պատրաստեն: Հոս՝ Մրտա
մոլորակին մէջ ալ համայնիկէն շարօջ կը պատրաս-
տեն որ ամէն համ ու հոտ ունի, արդ եթէ ամէն
բանին շարօջը կ'ըլլայ ինչո՞ւ չըլլայ ե խօսքին շարօ-
ջը որ իրաւամբ ամէն համ ու հոտ ունի, թէեւ որոշ
գոյն եւ որոշ համ մը չունի ինչպէս եւ ջուրը որ երբ
հրամցունեն ընթերցողներուդ, կան որ պիտի վշտա-
նան, կան որ պիտի ուրախանան, կան որ մասունքի
պէս ծոցերնին պիտի պահեն, կան որ պատտելով
դէն շարտեն, կան որ նստած ելած տեղերնին քեզի
զովասանքներ պիտի տան կան որ անլուր հայհոյու-
թիւններ պիտի տեղան հասցէիդ, վերջապէս կան որ
ազատանաներով գիբկէ գիբկ պիտի պտտունեն քեզ.
Եւ կան որ ցիցը հանելու որոշում պիտի տան: Ի՞նչ
աղուոր բան: Ահա այս էր այնքան տարիներէ ի վեր
հետապնդած ու գտած գիւտս, եւ որ այսօրուրնէ ըս-
կըսեալ պիտի հրամցունեմ քեզ սիրելի ընթերցող. եւ
որպէսզի թշնամիներուս ու հակառակորդներուս սուր
ու սլաքները ինձի չվնասեն, անոր համար իմ նոր

«Հայրենիքէ՛ս՝ Մ ր ա տ մուտրակէն պիտի գրեմ քեզ ամէն բան, ուրտեղ ծառին վրայէն սոյը երերցնող կատուին պէս չալըմ պիտի ընեմ վարը՝ ախայ կճըրտացնող եւ մորլտացող կենդանիներուն»

Ամէնէն առաջ պարտաւոր եմ իմ գտած մտորակիւմասին համառօտ տեղեկութիւն մը տալ ձեզ, անոր կազմակերպութեան, օգին, ջուլին եւ այլ ամէն բաներուն՝ որոնց առթիւ Ս. Գրքին մէջ լայնարձակ բան մը գրուած չի կայ եւ հասկնալն ալ անկարելի է, մինչեւ որ ամէն մարդ իմ տեղեկութիւններուս պաշարին չգիմէ զորս ինչ ճարպիկութիւնով ու ծանրածանր զոհողութիւններով գաղանի քաղած եմ այն պիրքէն կամ աւելի ճիշտը գողցած եմ Մ ր ա տ մուտրագի ամենահին գերդաստաններէն Արեւելք Ամիրսյին գրագարանէն որ անզուգական է եւ որուն անունըն է «Բանալի տիեզերական գազանեայ» եւ որուն հեղինակն է զարձևալ նոյն գերդաստանի անշամներն Արեւելք Ամիրայիկ աչքեցի Գալ անգամ»

S. M.

ԸՆԴ ԱՐՄԱՆԵՆՆԱԻ

— «Ընդ» գործիականով հօրով, ի՞նչ կը նշանակէ...

Այս քերականական հարցումը կուզուէ՞ր ինձ երբ կրկին Աթթարինէն կանցնէի:

Մտայ սոճատան ուր Հաճի Գաբրէլ նստած էս քանի մը տեսակ շիլ ըմպելիինեցու գաւաթներով շոճապատուած:

.. Իմացա՞ր հարցումս, ըսաւ:

- Այո՛, պատասխանեցի, բայց Պօղոսեան վարժարան չեմ յաճախած հետևաբար քիչ մը տկար եմ քերականութեան մէջ, ուստի չպիտի կրնամ մէջէն ելլել:

- Լաւ, ըսաւ Հաճի Գաբրէլ, «ընդ» գործիական հոլով տակը կը նշանակէ: Զոր օրինակ, «ընդ արմաւենեաւ» կը նշանակէ խուրմային ռառին տակը:

Եւ Հաճի Գաբրէլ սկսաւ քահ քահ խնդար: Հասկցայ որ լեզուին տակը բան մը կար, «պատմէ՛ նայինք» ըսի:

- Կիրակի օր մեր նորընտիր երեսփոխաններէն ութը ինը հոգի առաջնորդարան կերթան նիստ գումարելու: Առաջնորդարանին գուռը կղպուած էր: «Դուռը բաց» կը հրամայեն դռնապանին: «Հրաման ունիմ որ դուռը չբանամ» կը պատասխանէ դռնապանը և նորընտիրները կը ստիպուին իրենց նիստը ընել արմաւի ծառի մը տակ, մինչև որ արևուն ճառագայթները նիստը փակուած կը յայտարարեն և նորընտիրները քրտնաթոր ճակատներով կը մեկնին. ի՞նչ կ'ըսես ասոր:

- Կ'ըսեմ թէ պատմութիւնը կը կրկնուի. 1789ին, Բարիզի մօտ, Վերսալի մէջ, այդ տեսակ դէպք մը պատահած է: «Էթա փէնէնօ»:

անդամները նիստ ընելու համար դիմած են ժողովարար և դռնապանը պատասխանած է թէ Հուդովիկոս ՓՁի հրամանաւ դռները փոցուած են. այն ատեն անդամները բացօդեալ տեղ մը ըրած են իրենց նիստը:

- Այո՛, ճիշտ է պատասխանեց Հաճի Գաբրէլ, պատմութիւնը կը կրկնուի:

«ԱԶԱՏ ԽՕՄՔ» ՁԵՌՔԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ Փաշա քրպրավաճառ Տ. Թեւլալեանի խանութքը
Գահիրէ՛ լրագրավաճառ Տ. Հունկի և Կալարն Բեռք-քի քով և «Լուսարեք» թերթի գրուիչին մօտ
Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըրկին գինով:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹՆՅԱՆՍ

ՆՈՐ ՎԻՔԹՈՌԻԱ ՕԹԷԼ Ալեքսանդրիոյ Մօտ
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՁ ԲԱՅՈՒՍԾ Հալիթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս շինուած, այժմու ըստը հանգստաւէտութեան պայմաններով: Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտրական լոյս: ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ, ԹԵԼԵՓՈՆ ԹԻՐ. ՅՂԾ: Հեռագրական հասցէ՛ Նիւ Վիքթորիա, Ռապէլ, Թոսմվալով տասը վայրկեան Ալեքսանդրիայէն:

Ս. Ֆ. Ռէշիկ, ՏԵՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօնականներու և զինուորականներու համար: Բոլոր սննեալիւնները ծովան վրայ 'ը նային:

“ԱԶԱՏ ԽՕՍՔ”-ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՄԱՅ ՕՐԵՐԸ
Եզիպտոսի համար բաժնեգրեն է

40 ՔԻԻԸ 40 ՂՐԵ. ՈՂԶ
20 ” 20 ” ”

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն

| | | | | |
|---------|----|-----|----|--------|
| ԵՒՐՈՊԱ | 40 | ՔԻԻ | 10 | ՅՐԱՂ Ք |
| ՌՈՒՄԻ | ” | ” | 4 | ՐՈՒՊԼԻ |
| ԱՄԵՐԻԿԱ | ” | ” | 2 | ՏՈՒՆ |

Բաժանորդագրուիցին կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂԶ

“ԱԶԱՏ ԽՕՍՔ”-ի համար բաժնեգրին կա-
նիստը և է գրուածին պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPT)

Ծանուցումներ կընդունուին մասնաւոր
պայտաններով:

Պատասխանաւոր . Խորագիր **Ե. ՕՏԵՄՆ**

Տպգր. Փոքր Գ ԵԱԶԱՐԻԹԵԱՆ և Էմբանդիա